Հայտարարություն 2

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Լուսագյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ դաստիարակի (0,56 դրույքաչափով), երաժշտական դաստիարակի (0,25 դրույքաչափով), մեթոդիստի (ուսումնական գծով տնօրենի տեղակալ) (0.25 դրույքաչափով) թափուր պաշտոնները համալրելու համար:

Վերոհիշյալ պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1. դիմում (Ձև 1)

2. կրթության մասին փաստաթուղթ՝ դիպլոմ

3. անձը հաստատող փաստաթուղթ

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ

5. ինքնակենսագրություն ՝Ձև 4

6. լուսանկար 3x4չափի

7. այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են զինվորական գրքույկ,կամ զինվորական կցագրման վկայական:

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)

10. որակավորման տարակարգ(առկայության դեպքում

Փաստաթղթերի պատճենները անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակների հետ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսագյուղ գյուղի Ն.Դարբինյան 6 հասցեում: Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվում 30.04.2025թ :
Մրցույթի օր է սահմանվում 08.05.2025թ:
Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝
https://escs.am/am/news/11978
Տեղեկությունների համար զանգահարել 098700597 հեռախոսահամարով: